

Հայաստանի Հանրապետություն  
Հայտերի ներկայացման հրավեր  
Միջազգային մրցութային սակարկություն  
Գյուղական կարողությունների ստեղծում ծրագիր, փոխառություն No 1390P

Լոտ 1 - ՀՀ Վայոց Ձորի մարզի Հեր Հեր և Գլաձոր համայնքների ջրամատակարարում, Ագարակաձոր և Ռինդ համայնքների ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում, ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի գազաֆիկացում, ՀՀ Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ համայնքների գազամատակարարում, RACP/CW/ICB-2015/066

Լոտ 2 – ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշեն, Գանձաքար, Սևքար և Վազաշեն համայնքների ջրամատակարարում, Նավուր և Իծաքար համայնքների գազամատակարարում, RACP/CW/ICB-2015/067

Լոտ 3 – ՀՀ Լոռու մարզի Դսեղ, Ճոճկան և Մեծ Այրում համայնքների ջրամատակարարում, RACP/CW/ICB-2015/075

1. Սույն հրավերը հաջորդում է սույն ծրագրի համար հրապարակված Ծրագրի Գնումների ընդհանուր ծանուցմանը, որն գետեղվել է “Development Business“ պարբերականի 2011թ. հունիսի 24-ին, UN331 թիվ 802 համարում:

2. Հայաստանի Հանրապետությունը Միջազգային զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամից (ՄԶՕՀ) ստացել է փոխառություն "Գյուղական կարողությունների ստեղծում" ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է փոխառության գումարների մի մասը օգտագործել Լոտ 1 - ՀՀ Վայոց Ձորի մարզի Հեր Հեր և Գլաձոր համայնքների ջրամատակարարում, Ագարակաձոր և Ռինդ համայնքների ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում, ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի գազաֆիկացում, ՀՀ Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ համայնքների գազամատակարարում, RACP/CW/ICB-2015/066; Լոտ 2 – ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշեն, Գանձաքար, Սևքար և Վազաշեն համայնքների ջրամատակարարում, Նավուր և Իծաքար համայնքների գազամատակարարում, RACP/CW/ICB-2015/067; Լոտ 3 – ՀՀ Լոռու մարզի Դսեղ, Ճոճկան և Մեծ Այրում համայնքների ջրամատակարարում, RACP/CW/ICB-2015/075 պայմանագրերով նախատեսվող աշխատանքների դիմաց վճարումներ կատարելու համար:

3. ՀՀ կառավարության աշխատակազմի "Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ն հրավիրում է իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող կազմակերպություններին ներկայացնելու հայտեր վերոնշյալ պայմանագրով նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման համար: Աշխատանքների իրականացման ժամկետն է՝ 12 ամիս; Հայտատուները կարող են մրցել մեկ Լոտի, երկու Լոտերի կոմբինացիայի կամ երեք Լոտերի համար: Հայտերը յոթաքանչյուր Լոտի համար կգնահատվեն առանձին այնպես, որ երբ մրցում են մեկից ավելի Լոտի համար ապա առանձին Հայտեր պետք է պատրաստվեն և ներկայացվել ամեն մի Լոտի համար: Նմանապես, եթե կլինեն զեղչեր, ապա դրանք պետք է առաջարկվեն առանձին ամեն մի Լոտի համար: Յուրաքանչյուր Լոտի համար պետք է կնքվի առանձին պայմանագիր:

4. Մրցույթը կիրականացվի Միջազգային զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամի Գնումների Ուղեցույցների համաձայն՝ Միջազգային մրցութային սակարկության եղանակով: Մրցույթը բաց է Մրցութային փաստաթղթերով սահմանված իրավասու երկրների ծագում ունեցող բոլոր հայտատուների համար:

5. Շահագրգիռ և իրավասու հայտատուները կարող են ստանալ լրացուցիչ տեղեկություններ և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ստորև նշված հասցեում բոլոր աշխատանքային օրերին, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 09:00-ից մինչև 18:00:

6. Որակավորման չափանիշները ներառում են.

ա/ Վերջին երեք տարիների ընթացքում կատարած շինարարական աշխատանքների միջին տարեկան ծավալը

յուրաքանչյուր Լոտի համար պետք է կազմի՝

Լոտ 1 – 1,208,250,000.00 ՀՀԴ կամ 2,543,685.0 ԱՄՆ դոլար

Լոտ 2 – 1,864,050,000.00 ՀՀԴ կամ 3,924,315.0 ԱՄՆ դոլար

Լոտ 3 – 1,290,000,000.00 ՀՀԴ կամ 2,715,790.0 ԱՄՆ դոլար

բ/ որպես գլխավոր կապալառու պետք է ունենա փորձառություն նմանատիպ բնույթի և բարդության 2 շինարարական աշխատանքներում վերջին հինգ տարիների ընթացքում յուրաքանչյուր Լոտի համար;

գ/ շրջանառու ընթացիկ միջոցներ և/կամ վարկային գծերի հնարավորություններ, այլ պայմանագրային պարտավորություններով չծանրաբեռնված /յուրաքանչյուր Լոտի համար/՝

Լոտ 1 – 201,375,000.0 ՀՀԴ կամ 423,947.0 ԱՄՆ դոլար

Լոտ 2 – 310,675,000.0 ՀՀԴ կամ 654,053.0 ԱՄՆ դոլար

Լոտ 3 – 215,000,000.0 ՀՀԴ կամ 452,632.0 ԱՄՆ դոլար

Այն դեպքում երբ Հայտատուները մրցում են մեկից ավելի Լոտերի համար նրանք պետք է բավարարեն համապատասխան Լոտերի նվազագույն միացյալ գումարային չափանիշին որպեսզի համարվեն որակավորված և շնորհվեն մեկից ավելի Լոտ/պայմանագիր:

7. Հետաքրքրություն ունեցող հայտատուների կողմից մրցութային փաթեթը անգլերեն լեզվով կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեում, գրավոր դիմում ներկայացնելու և 15,000.0 ՀՀ դրամի կամ 40.0 ԱՄՆ դոլարի չափով, չփոխհատուցվող գումար վճարելու պարագայում: Նշված գումարի վճարման եղանակն է ստորև նշված բանկային հաշվին վճարումը: Մրցութային փաթեթը կարող է ուղարկվել արագընթաց փոստով:

8. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև 2015թ. մայիսի 29 -ը ժամը 15:00: Էլեկտրոնային եղանակով հայտերի ներկայացում չի թույլատրվում: Ուշացված հայտերը կմերժվեն և կվերադարձվեն Հայտատուներին չբացված վիճակում: Հայտերը կբացվեն անմիջապես, 2015թ. մայիսի 29 -ին ժամը 15:00-ին մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ՝ ստորև նշված հասցեում:

9. Հայտերը պետք է ուղեկցվեն Հայտի երաշխիքով, որի գումարը պետք է կազմի՝

Լոտ 1 – 16,110,000.0 ՀՀԴ կամ 33,916.0 ԱՄՆ դոլար

Լոտ 2 – 24,854,000.0 ՀՀԴ կամ 52,324.0 ԱՄՆ դոլար

Լոտ 3 – 17,200,000.0 ՀՀԴ կամ 36,211.0 ԱՄՆ դոլար

Այն դեպքում երբ Հայտատուները մրցում են մեկից ավելի Լոտերի համար նրանք պետք է ներկայացնեն առանձին Հայտի Երաշխիքներ յուրաքանչյուր Լոտի համար:

Վերևում հիշատակվող հասցեն է.

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ

ՀՀ, ք. Երևան, 0010, Տիգրան Մեծի 4, 6-րդ հարկ, տնօրեն Աշոտ Վարդանյան

հեռ. 37410 54 65 10 138; Ֆաքս: 37410 58 80 58; Էլ.փոստ: [procurement@rado.am](mailto:procurement@rado.am);

Ամերիա Բանկ ՓԲԸ, հ/հ 15700 – 11483010200 /ՀՀ դրամով փոխանցումների համար/

Ամերիա Բանկ ՓԲԸ, հ/հ 15700 – 11483010301 /ԱՄՆ դոլարով փոխանցումների համար/

